

կայարաններու լայնութեամբնու բարձրութեամբը հանքային ածուխ լեցընենք, հաւասար կըլլայ այս շոգեկառաց մէջ տարին վառուած ածուխին :

ԿԵՐՊԱՐԱՆՔԸ ԼՈՒՍԱՆԿԱՐԵԼ ՈՒՋՈՂ ԶԻՆՈՒՈՐ ՄԸ.

Անցեայ օր ձիաւոր գօրաց մէկը հագուած կապուած՝ եօրներորդ դատիկոնը բնակող լուսանրկարի մը գործարանը կերթայ որ կերպարանքը հանել տայ :

— Նստե՛, կըսէ, լուսանկարը . գլուխդ վեր բռնէ, ձեռուրներդ ամփոփէ, գործիքին ձերմակ կետին վրայ նայէ, երեսդ շատ մի կախեր, քիչ մը ժպտելու պէս ըրէ, ծնկուրներդ շատ մ'երկընցընէր...

Այն միջոցին զինուորին միտքը կուգայ որ ձին ալ մեկտեղ նկարել տայ :

— Թողութիւն կընես, Պարոն, կըսէ. միտքս փոխեցի, ձիոյս վրայ կուգեմ որ զիս քաշես :

— Այս ալ գեղ չէ, կըսէ ինքն իրեն լուսանրկարը. եւ զինուորին դառնալով « Հրամանքդ ալ, Պարոն, այն բեւը կտրած զինուորին կընամանիս որ մեկալ օր եկեր ոտք կըկոխէր որ երկու բեւն ալ ամբողջ հանեմ : Գիտցիր որ լուսանկարը տեսածը միայն կրնայ հանել :

— Բայց ձիս կրնաս տեսնել, որովհետեւ վարը դուռը կեցած է :

— Պետք էր վեր բերելիր, կըսէ լուսանկարը ժպտելով :

— Հասկըցայ, հասկըցայ կըպատասխանէ զինուորը, որ քու բանդ չէ եղեր. պետք էր մեկէն ըսելիր որ ձի շինել չես գիտեր : Հարիւրապետես ինդրեմ որ քեզմէ ճարտար արուեստաւոր մը ինծի ցուցընէ, կըսէ. եւ ուսերը թօթուելով դուրս կեցէ :

ԱՐԵՍՆ ՊԱՎԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԼԵՅՐԵՆԵԼՈՒ ՀՆԱՐՔ.

Մօտերս Սաքսոնիա Վայմարի մեծ դքսութեան Ենա քաղաքին մէջ հետաքրքրական բժշկութիւն մը եղած է, գոր արժան կըհամարիմք մեր ընթերցողաց հաղորդել : Նոր գիւտ մը գտնուած է որ արիւնհոսութեամբ կամ ուրիշ ո՞ր եւ իցէ պատճառով արիւնը հատած մարդոյն երակները կըբանան եւ առողջ արիւնոտ մարդու մը բացուած երակներու հետ կըհաղորդեն : Ամսոյս 20ին Մարքէն անունով ճարտար բժիշկը բոլորովին անարիւն մնացած մանկամարդ կնոջ մը վրայ ասոր փորձն ընելով՝ մահուրնէ ազատեր է գայն : Իր աշակերտներէն մէկը սիրով իր երակներուն արիւնը այս գեղեցիկ փորձին նուրիներ է. եւ իր

անձնանուէր մարդասիրութեանը կենսատու պըտուողը տեսնելով ուրախացեր է :

ԶԻՈՒ ՄԸ ԻՐ ՏԻՐՈՋԸ ՎՐԱՅ ՈՒՆԵՅՍՄ ՍԷՐԸ.

Չիաւոր զինուորին մէկը որ իր քսանամեայ ծառայութեանը մէջ տասնըվեց տարի միակերպ նոյն ձիոյն վրայ հեծեր ու շատ պատերազմներու մէջ գտնուեր էր, այս տարի փետրուարի 20ին զինուորութենէ կազատի եւ ձին ուրիշի մը կըտարուի : Ազնիւ կենդանին այնչափ առջի տիրոջը հետ վարժեր ու վրան սէր կապեր է եղեր, որ կարելի չէ եղած անոր կորստեան ցաւը մոռնալ, եւ ուրիշի հետ վարժիլ : Օրերով առնենաին բան չէ ուզած բերանն առնուլ, եւ մարտի Չին մեռեր է : Այսպիսի տիրասիրութեան օրինակ մարդկանց մէջ ամենաքիչ կըգտնուի, թող թէ կենդանեաց մէջ :

ԽԱՐԳԱՒՈՒԹԻՒՆ ՇԱՔԱՐԻ.

Այս օրերս Գերմանիոյ քաղաքներէն մեկուն մէջ գործաւորին մէկը 10 լիտր ծեծած շաքար կըզնէ, եւ ուշադրութեամբ դիտելով կընայի որ մանրավաճառը (պագգայ) մէջը լիտր մը կիր (քիրեճ) խառներ է : Շուտ մը մեկէն օրագիրը դնել կուտայ թէ այն մանրավաճառն որ 10 լիտրի վրայ մեկ լիտր կիր խառնեց տուաւ ինծի՝ թէ որ խարդախած լիտրը չխրկէ, գիտցած ըլլայ որ անունովն ու տեղովը այս օրագրով պիտի հրատարակեմ :

Երկրորդ առաւօտ գործաւորը մեկ լիտրի տեղ 9 լիտր ծեծած շաքար կընդունի. վասն զի այլ եւ այլ մանրավաճառներ որ նոյն խարդախութիւնն ըրեր էին, վախերնէն որ յանցանքին դուրս չեցէ, մեկ մեկ լիտր շաքար դրկեր էին :

ՄԵՂՈՒԻ ԽԱՅՈՒԱՅԻՒՆ ԳԷՄ ԳԵՂ.

Մեղուի, իշամեղուի, բրետի, պիծակի խածուածքին դեմ ամենադիւրին եւ շատ գօրաւոր զեղ է քափուրի (քեաֆիրի) ու սպիտակադեղի (լուսիւպեճ) բաղադրութիւնը, եւ որպէս զի քափուրը չցնդի, պետք է որ այս բաղադրութիւնը գոց տփիկի մը մէջ պահուի :

Propriétaire-gérant : A. LACHAT

Ի ՓԱՐԻՉ, Ի ՏՊԱՐԱՆԻՆ ԱՐԱՄԵՍԱՆ.